| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր |
| **Երկիր** | Հայաստան |
| **Բիզնես ոլորտ** | Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածք |
| **Ծրագրի համար** | 46172 |
| **Ֆինանսավորման աղբյուր** | ՎԶԵԲ, ԵՆԲ, ԵՄ ՀՆԳ, E5P |
| **Պայմանագրի տեսակ** | Ծրագրի ապրանքներ, աշխատանքներ ծառայություններ |
| **Ծանուցման տեսակ** | Հայտեր ներկայացնելու հրավեր |
| **Հրատարակման ամսաթիվ** | 31.10.2018թ. |
| **Փակման ամսաթիվ** | 24.05.2019թ.՝ ժամը 16:00 /տեղական ժամով/ |

## ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

## ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՌԿԱ ՀԻՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՓԱԿՈՒՄ ԵՎ ԱՌԿԱ ԵՎ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հայտեր ներկայացնելու սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար Ընդհանուր Գնումների ծանուցմանը, որ հրապարակվել է 2018թ. հունվարի 18-ին ՎԶԵԲ-ի կայքի Բիզնես հնարավորություններ բաժնում (http://www.ebrd.com/work-with-us/procurement/p-pn-180118a.html):

Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետությունը ստացել է փոխառություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ), փոխառություն Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ), դրամաշնորհ Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքից (ԵՄ ՀՆԳ), ինչպես նաև դրամաշնորհ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամից (E5P): Ավելին, Երևանի քաղաքապետարանը կերաշխավորի անհրաժեշտ ֆինանսական միջոցների օգտագործումը նոր աղբավայրի շահագործման համար:

Պայմանագրի շրջանակներում Գործատուն □Երևանի քաղաքային նոր աղբավայր□ ՓԲԸ-ն է:

Գործատուն հրավիրում է ընկերությունների՝ ներկայացնել փակ ծրարներով հայտեր հետևյալ պայմանագրի համար՝

- **Նոր աղբավայրի նախագծում և կառուցում, առկա հին աղբավայրերի փակում և առկա և նոր աղբավայրերի շահագործում**՝ ներառյալ հետևյալ բաղադրիչները.
  - Նոր աղբավայրի նախագծում և կառուցում, գործող հին աղբավայրերի փակում՝
    - Նուբարաշենի գործող աղբավայրի փակում
    - Աջափնյակի գործող աղբավայրի փակում
    - Նուբարաշենի նոր աղբավայրի նախագծում և կառուցում (Գոտի 1, Գոտի 2և համապատասխան ենթակառուցվածքներ)

- Աղբավայրի շահագործում ներառյալ՝
  - Նուբարաշենի նոր աղբավայրի Գոտի 1-ի շինարարության ընթացքում Նուբարաշենի գործող աղբավայրի շահագործում
  - Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցումից հետո աղբավայրի շահագործում 5(հինգ)տարի ժամկետով հետագայում 5(հինգ)տարով շահագործման ժամկետը երկարացնելու հնարավորությամբ՝ պայմանավորված Կապալառուի կատարողականով և կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
  - Նուբարաշենի և Աջափնյակի փակված աղբավայրերի՝ հետ-փակման մոնիթորինգ և կառավարում:

Նոր աղբավայրի կառուցումն ու գործող աղբավայրերի փակումը պետք է իրականացվի Եվրոպական խորհրդի՝ 1999թ.ապրիլի 26-ի հ.1999/31 դիրեկտիվի համաձայն:

Հայտատուները պետք է անցնեն որակավորման նվազագույն շեմը.

- Նվազագույն միջին տարեկան շրջանառություն 20,000,000 (քսան միլիոն) եվրոյի չափով՝ հաշվարկված որպես վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում ընթացիկ կամ ավարտված պայմանագրերից ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ,

- Այնպիսի ֆինանսական աղբյուրների հասանելիություն կամ մատչելիություն, ինչպիսիք են իրացվելի ակտիվները, ազատ անշարժ ակտիվները, վարկային գծերը կամ այլ ֆինանսական միջոցները՝ հաշվի առնելով հայտատուների այլ պայմանագրերում ստանձնած պարտավորությունները (բացի պայմանագրային որևէ կանխավճարներից)՝ համապատասխանելու հայտատուների՝ 5,000,000 (հինգ միլիոն) եվրոյից ոչ պակաս ֆինանսական աղբյուրների պահանջին;

- Վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում հայտատուն պետք է ունենա դատավարական և/կամ արբիտրաժային կայուն պատմություն, առկայության դեպքում պետք է լուծված լինի ի օգուտ հայտատուի կամ ՀՁԿԱ-ի (համատեղ ձեռնարկություն, կոնսորցիում կամ ասոցիացիա) ցանկացած կողմի: Բոլոր ընթացիկ դատավարությունները միասին չպետք է միասին կազմեն հայտատուի զուտ արժեքի 10%-ից (տաս տոկոսից) ավել:

- Վերջին 10 (տաս) տարվա ընթացքում մասնակցություն որպես կապալառու, պայմանագրի կառավարիչ կամ ենթակապալառու առնվազն 5(հինգ)պայմանագրում, որոնց ընդհանուր արժեքը կկազմի նվազագույնը 13,000,000 (տասներեք միլիոն) եվրո, վերջիններս պետք է հաջողությամբ կամ էապես ավարտված լինեն և բնույթով ու դժվարությամբ նման առաջադրված աշխատանքներին: Պայմանագրերից առնվազն մեկը պետք է լինի նախագծման-կառուցման: Կոշտ և վնասակար թափոնների աղբավայրերի՝ ԵՄ պահանջների համաձայն փակումը կհամարվի որպես նմանատիպ աշխատանք:

- Վերոնշյալ 5 պայմանագրերի շրջանակներում պահանջվում է հետևյալ հատուկ փորձը՝
  (a) Նախագծում-կառուցում բնույթի առնվազն մեկ ավարտված պայմանագիր;

(b) Առնվազն 8 (ութ) համակերեսով նոր աղբավայրի նախագծում և կառուցում՝ կառուցված Եվրոպական Խորհրդի 1999թ. ապրիլի 26-ի հ. 1999/31 դիրեկտիվի համաձայն, թափոնների աղբատեղիի տարածքում կամ նմանատիպ աշխատանքներ ընստծավալի, աշխատանքների բնույթի, բարդության և մեթոդների, աղբավայրի հիմքի և վերին մակերևույթի տեղադրմամբ՝ առնվազն 8 (ութ) հա-ի համար օգտագործելով HDPE մեմբրան;

(c) Առնվազն 15 (տասնհինգ) հա աղբավայրի փակում կամ նմանատիպ պայմանագիր, որը կներառի առնվազն 15 (տասնհինգ) հա անջրաթափանց տարածք;

(d) <u>Աղբավայրի շահագործման</u> առնվազն 4 (չորս) տարվա փորձ, որը շահագործվել է համաձայն Եվրոպական խորհրդի՝ 1999թ. ապրիլի 26-ի հ. 1999/31 դիրեկտիվի:

- Համատեղ ձեռնարկության, կոնսորցիումի և ասոցիացիայի (ՀՁԿԱ) մասնակցության հնարավորություն.
    - Գործընկերներից մեկը պետք է համապատասխանի տարեկան միջին շրջանառության և ֆինանսական միջոցների պահանջների առնվազն 60%-ին;
    - ՀՁԿԱ-ի անդամները միասին պետք է բավարարեն որակավորման բոլոր չափանիշները:

- Հայտատուն հետևյալ գլխավոր պաշտոնների համար պետք է ներկայացնի համապատասխան որակավորված անձնակազմ: Յուրաքանչյուր պաշտոնի համար հայտատուն պետք է տրամադրի տեղեկատվություն առաջին և այլ ընտրանքային թեկնածուի համար, որոնցից յուրաքանչյուրը պետք է համապատասխանի փորձի պահանջներին.
  *(Պաշտոն - Ընդհանուր փորձ, տարիներ - հատուկ փորձ, տարիներ)*
    - Ծրագրի ղեկավար – 15 – 5
    - Շինարարության/տեղամասի ղեկավար – 15 – 5
    - Ճարտարագետ-մեխանիկ – 15 – 5
    - Ճարտարագետ-էլեկտրիկ – 15 – 5
    - Եռակցող (նվազագույնը 3 անձ), ջերմապլաստիկ եռակցման ԵՄ հավաստագիր ունեցող՝ համաձայն EN 13067 և Doc. EWF 581:01, դիրեկտիվ P-101 7-PE խմբի համար (ժապավենային եռակցման մեքենամեկուսացման համար, նյութերի PE խումբ) կամ դրան համարժեք – 10 – 5

Շահագործման համար Հայտատուն կտրամադրի հետևյալ գլխավոր պաշտոնները.
*(Պաշտոն - Ընդհանուր փորձ, տարիներ - հատուկ փորձ, տարիներ)*
- Շահագործման ղեկավար – 15 – 7
- Ճարտարագետ-բնապահպան – 10 – 5
- Աշ ղեկ (4 անձ) – 10 – 5

Հայտատուն անձնակազմի ինքնակենսագրականներում (CV) պետք է նշի առաջարկվող թեկնածուների հետ աշխատանքային հարաբերության մասին: Եթե առաջարկվող թեկնածուն հայտատուի աշխատող չի հանդիսանում, ապա Հայտատուն ինքնակենսագրականի հետ միասին պետք է ներկայացնի առաջադրվող թեկնածուի կողմից ստորագրված պարտավորագիր:

- Հայտատուն պետք է հստակ նշի այն շինարարական մեքենաները և սարքավորումները, որոնք մտադրված է օգտագործել Աշխատանքների իրականացման համար:

ՎԶԵԲ-ի և ԵՄ-ի վարկային, ինչպես նաև ԵՄ ՅՆԳ-ի և E5P-ի դրամաշնորհային միջոցներից ֆինանսավորվող պայմանագրերի մրցույթները բաց են բոլոր երկրների ընկերությունների համար: ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի վարկային, ինչպես նաև ԵՄ ՅՆԳ-ի և E5P-ի դրամաշնորհային միջոցները չեն կարող օգտագործվել անձանց կամ ընկերությունների որևէ վճարման կամ ապրանքների որևէ ներկրման համար, եթե այդպիսի վճարումը կամ ներկրումը արգելված է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII Գլխի համաձայն ընդունված ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշմամբ:

Կիրառելի գնումների կանոններն են ՎԶԵԲ-ի Գնումների քաղաքականությունը և կանոնները (PP&R, վերանայված՝ հոկտեմբեր, 2014թ.), որոնց կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.ebrd.com/news/publications/policies/procurement-policies-and-rules.html

Մրցութային փաստաթղթերն անգլերենով անվճար ձեռք բերելու համար հայտատուները պետք է գրեն ներքոնշյալ հասցեով՝ խնդրելով տրամադրել *ICB/DBO/001:Նոր աղբավայրի նախագծում և կառուցում, առկա հին աղբավայրերի փակում և առկա ու նոր աղբավայրերի շահագործում* Մրցութային փաստաթղթերը:

Իրականացվելու է երկու փուլով մրցույթ հետևյալ ընթացակարգով.

(a) Մրցույթի առաջին փուլը կներառի միայն տեխնիկական առաջարկը, առանց հղում անելու որևէ գնի վրա, ինչպես նաև մրցութային փաստաթղթերում սահմանված տեխնիկական և կոմերցիոն պայմանների շեղումների ցանկը կամ ցանկացած այլ այլընտրանքային տեխնիկական լուծումներ, որ հայտատուն կցանկանա առաջարկել, և դրանց հիմնավորումները՝ պայմանով, որ այդպիսի շեղումները կամ այլընտրանքային լուծումները չեն փոխի ծրագրի հիմնական նպատակները: Առաջին փուլի հայտերը Գործատուի կողմից գնահատվելուց հետո բոլոր այն հայտատուները, որոնք կհամապատասխանեն որակավորման չափանիշներին և ներկայացրել են տեխնիկապես համապատասխանող հայտ, Գործատուի կողմից կհրավիրվեն պարզաբանման հանդիպման: Այդ բոլոր հայտատուների առաջարկները կվերանայվեն հանդիպման ընթացքում, և բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, լրացումները, ջնջումներն ու այլ ճշգրտումները կնշվեն և կարձանագրվեն Յուշագրում: Երկրորդ փուլի հայտ ներկայացնելու հրավեր կտրամադրվի միայն այն որակավորված հայտատուներին, որոնք ներկայացրել են Առաջին փուլի համար ընդունելի և տեխնիկապես համապատասխանող հայտեր:

(b) Երկրորդ փուլի հայտը կներառի փոփոխված տեխնիկական առաջարկը, որ կընդգրկի Գործատուի կողմից պահանջված, հանդիպման Յուշագրում արձանագրված բոլոր փոփոխությունները կամ որն ըստ անհրաժեշտության կարտացոլի մրցութային փաստաթղթերի ցանկացած փոփոխություն, որ տեղի է ունեցել Առաջին փուլի հայտը ներկայացնելուց հետո, ինչպես նաև կոմերցիոն հայտը/ֆինանսական հայտը:

Առաջին փուլի հայտերը պետք է առաքվեն ներքոնշյալ հասցեով 2019թ. մայիսի 24-ի ժամը 16:00-ին կամ նախքան այդ: Նշված ժամին հայտերը կբացվեն հայտատուների այն ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել հայտերի բացմանը:

Երկրորդ փուլի բոլոր հայտերը պետք է ներառեն 600,000 (վեց հարյուր հազար) եվրոյի չափով Հայտի Երաշխիք և պետք է առաքվեն ներքոնշյալ հասցեով Երկրորդ փուլի հայտեր ներկայացնելու Հրավեր-Նամակում նշված վերջնաժամկետին կամ մինչև վերջնաժամկետը: Նշված ժամին հայտերը կբացվեն հայտատուների այն ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել հայտերի բացմանը:

Հետաքրքրված հյատատուները հետագա տեղեկատվություն ստանալու, մրցույթային փաստաթղթերն ուսումնասիրելու կամ ձեռք բերելու համար կարող են դիմել հետևյալ հասցեով՝

Կոնտակտային անձ՝ Պարոն Արման Պետրոսյան, գնումների մասնագետ
Գնումներն իրականացնող կազմակերպություն՝ □Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ□ ՀՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Բուզանդի փող. 1/3, հարկ/սենյակի համար՝ 5-րդ հարկ/511 սենյակ (գնումների սենյակ)
Հեռախոսահամար՝ +374 10 52 09 73
Էլեկտրոնային հասցե՝ arman.petrosyan@yerevan.am